*Հաստատված է*
*Հայաստանի եվրոպական Համալսարանի*
*գիտական խորհրդի*
*2023 թվականի դեկտեմբերի 28-ի*
*թիվ 48 նիստում*
*Ռեկտոր՝ Հ. Բիշարյան*

***Approved by***
*the Scientific Council of the*
*European University of Armenia*
*December 28, 2023*
*Session N 48,*
*Rector: H. Bisharyan*

______________________________
(ստորագրություն, Կ.Տ./signature)

# ՀԵՀ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի եվրոպական համալսարանի (այսուհետ՝ ՀԵՀ, Համալսարան) սպորտային ակումբի (այսուհետ՝ Ակումբ) կարգավիճակի, կառուցվածքի, կառավարման և անդամության հետ կապված հարաբերությունները:

1.2. Ակումբը իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող սովորողների միավորման տեսակ է՝ ուղղված նրանց սպորտային և մարզամշակութային ներուժի համախմբանը և իրացմանը:

1.3. Ակումբը ստեղծվում և իր գործունեությունը դադարեցնում է Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

1.4. Ակումբը իր գործունեության ընթացքում չի կարող ծավալել կուսակցական կամ քաղաքական գործունեություն:

1.5. Ակումբը իր գործունեության շրջանակներում սերտորեն համագործակցում է Համալսարանի ուսանողական խորհրդի, Համալսարանի ուսանողական գիտական ընկերության, ներբուհական և միջբուհական ուսանողական կազմակերպությունների և

# CHARTER OF EUA SPORTS CLUB

## 1. GENERAL PROVISIONS

1.1 This regulation defines the status, structure, management and membership relations of the Sports Club (hereinafter referred to as Club) of the European University of Armenia (hereinafter referred to as EUA, University).

1.2 The club is a type of association of students without the status of a legal entity, aimed at consolidating and realizing their sports and sports-cultural potential.

1.3 The club is established and its activities are terminated by the decision of the Scientific Council of the University.

1.4 The club cannot carry out party or political activities during its activity.

1.5 Within its activities, the club closely cooperates with the Student Council of the University, the Student Scientific Society of the University, intra-university and inter-university student organizations and structures.

կառույցների հետ:

1.6. Համալսարանի ուսանողական ինքնակառավարման կառույցները իրենց սպորտային և մարզամշակութային միջոցառումները իրականացնում են սպորտային ակումբի հետ սերտ փոխգործակցության միջոցով:

1.6 The student self-government structures of the university implement their sports and sports-cultural events through close interaction with the sports club.

1.7. Ակումբը իր գործունեությունն իրականացնում է օրինականության, կամավորության, իրավահավասարության և ժողովրդավարության սկզբունքների հիման վրա:

1.7 The club carries out its activities based on the principles of legality, volunteerism, equality and democracy.

1.8. Ակումբը իր գործունեությունը իրականացնում է ՀՀ օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը, սույն կանոնադրությանը և Համալսարանի ներքին իրավական ակտերին համապատասխան:

1.8 The club carries out its activities in accordance with RA legislation, the University charter, this charter and internal legal acts of the University.

1.9. Ակումբը կարող է ունենալ իր անվանումը պարունակող կլոր կնիք, տարբերանշան, ձևաթղթեր, ինչպես նաև անհատականացման այլ միջոցներ:

1.9 A club may have a round stamp, logo, forms, and other means of personalization containing its name.

1.10. Սույն կանոնադրությունը և նրանում կատարված փոփոխությունները և լրացումները հաստատվում է Համալսարանի գիտական խորհրդի կողմից:

1.10 This statute and the changes and additions made to it are approved by the Scientific Council of the University.

1.11. ***Ակումբի անվանումն է.***

ա) հայերեն լրիվ՝ **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ»,**

բ) հայերեն կրճատ՝ **«ՀԵՀ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ»,**

գ) ռուսերեն լրիվ՝ **"СПОРТИВНЫЙ КЛУБ" ЕВРОПЕЙСКОГО УНИВЕРСИТЕТА АРМЕНИИ",**

դ) ռուսերեն կրճատ՝ **"СПОРТИВНЫЙ КЛУБ ЕУА",**

ե) անգլերեն լրիվ՝ **"SPORTS CLUB OF THE EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA",**

1.11 ***The name of the club is:***

a) Armenian in full: **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ»,**

b) Armenian abbreviation: **«ՀԵՀ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ»,**

c) Russian in full: **"СПОРТИВНЫЙ КЛУБ" ЕВРОПЕЙСКОГО УНИВЕРСИТЕТА АРМЕНИИ!",**

d) Russian abbreviation: **"СПОРТИВНЫЙ КЛУБ ЕУА",**

e) English in full: **"SPORTS CLUB OF THE EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA",**

զ) անգլերեն կրճատ՝ " **SPORTS CLUB OF EUA"**:

1.12 Ակումբի գտնվելու վայրն է՝ ք. Երևան Դավիթ Անհաղթի 10:

## 2. ԱԿՈՒՄԲԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Ակումբի գործունեության հիմքում դրված են Համալսարանի առաքելությամբ պայմանավորված ***նպատակները***, որոնք միտված են նպաստել սովորողների սպորտային և մարզամշակութային ներուժի համախմբանը և պահանջմունքների բավարարմանը՝ կարևորելով բարձրագույն կրթության բնագավառում անհատի ֆիզիկական և հոգեկան առողջությունը:

2.2. ***Ակումբի գործունեության ուղղություններն են.***

ա/ ուսանողության շրջանում առողջ կենսակերպի արմատավորում, սպորտային և մարզամշակութային միջոցառումներին ուսանողության ներգրավում,

բ/ ուսանողությանը մշտական գործող մարզական խմբակներում ներգրավելու միջոցով նպաստել նրանց ֆիզիկական կարողությունների կատարելագործմանը, առողջության ամրապնդմանը,

գ/ բացահայտել սովորողների սպորտային և մարզական հետաքրքրությունները և ուղղորդել դրանց առավել խորացմանը,

դ/ ի հայտ բերել լավագույն ուսանող-մարզիկներին՝ համաշխարհային ունիվերսիադաների, Հայաստանի եվրոպական համալսարանի մարզական խաղերի, ինչպես նաև ուսանողական սպորտի ֆեդերացիայի կողմից իրականացվող մարզական հանդիպումներին

f) English abbreviation: "**SPORTS CLUB OF EUA"**.

1.12 The location of the club is: 10 Davit Anhaght str., Yerevan.

## 2. GOALS AND ACTIVITY DIRECTIONS OF THE CLUB

2.1 The activities of the club are based on the **goals** determined by the mission of the University, aimed at contributing to the consolidation of the students' sports and sports-cultural potential and meeting the needs, emphasizing the physical and mental health of the individual in the field of higher education.

2.2 ***The directions of the club's activities are:***

a/ instill a healthy lifestyle among students, involving students in sports and cultural events,

b/ contribute to the improvement of their physical abilities and strengthening of health by involving students in permanent sports groups,

c/ identify sports and sports interests of students and guide them to their further deepening,

d/ bring out the best student-athletes in order to ensure further participation in world universiades, sports games of the European University of Armenia, as well as sports meetings organized by the Student Sports Federation,

e/ organize sports and cultural entertainment of students,

հետագա մասնակցությունը ապահովելու համար,

ե/ կազմակերպել ուսանողների սպորտային և մարզամշակութային ժամանցը

զ/ կազմակերպել Հայաստանի եվրոպա-կան համալսարանի ամենամյա մարզական խաղերը:

f/ organize the annual sports games of the European University of Armenia.

## 3. ԱԿՈՒՄԲԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1. ***Ակումբի կառարման մարմիններն են.***

ա) Ակումբի խորհուրդը,

բ) Ակումբի նախագահը:

3.2. Ակումբի կառավարման բարձրագույն մարմինը ակումբի խորհուրդն է:

3.3. Խորհուրդը բաղկացած է Խորհրդի նախագահից, փոխնախագահից, քարտու-ղարից և 6 անդամներից:

3.4. Խորհուրդը իր գործունեությունը իրականացնում է 1 տարի ժամկետով:

3.5. Ակումբի խորհրդի առաջին կազմը ձևավորվում է Ակումբի նախագահի կողմից՝ հիմք ընդունելով անդամների թեկնածուների սպորտային և մարզամշակութային հետաքրքրությունները և աշխատանքների կազմակերպման նախաձեռնողականությունը:

3.6. Ակումբի խորհրդի նոր անդամի ընտրությունը իրականացվում է բաց քվեարկությամբ՝ Խորհրդի ընդհանուր անդամների ձայների մեծամասնությամբ:

3.7. Խորհուրդը իր գործունեությունը իրականացնում է նիստերի միջոցով՝ յուրաքանչյուր կիսամյակում առնվազն երկու անգամ: Անհրաժեշտության դեպքում կարող են հրավիրվել նաև արտահերթ նիստեր:

## 3. STRUCTURE AND MANAGEMENT OF THE CLUB

3.1 ***The governing bodies of the club are:***

a) The Club Council,

b) The President of the Club.

3.2 The highest governing body of the club is the Club Council.

3.3 The Council consists of the Chairman, Vice-Chairman, Secretary and 6 members of the Council.

3.4 The Council carries out its activities for a period of 1 year.

3.5 The first composition of the Club's Council is formed by the president of the club, based on the sports and sports-cultural interests of the candidate members and initiative in organizing work.

3.6 The election of a new member of the Club Council is carried out by open voting with the majority of the votes of the general members of the Council.

3.7 The Council conducts its activities through sessions at least twice per semester. Special sessions may also be convened if necessary.

3.8. Ակումբի խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են Ակումբի խորհրդի անդամների կեսից ավելին:

3.9. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

3.10. ***Ակումբի խորհուրդը.***

ա) որոշում է Ակումբի զարգացման հիմնական ուղղությունները, կազմում և ներկայացնում դրանցից բխող օրակարգերը,

բ) մշակում է Ակումբի գործունեության տարեկան հաշվետվությունը և միջոցառումների կազմակերպման կիսամյակային կամ տարեկան նախագիծը (ժամանակացույց), քննարկում է Ակումբի զարգացման և արդիականացման վերաբերյալ առաջարկներ:

գ) ստեղծում և վերակազմակերպում է այդ օրակարգերի սպասարկմանն ուղղված ներկազմակերպական հանձնաժողովներ և կառուցվածքային միավորներ,

դ) մշակում և ընդունում է ակումբի ներքին կառուցվածքային միավորների և հանձնախմբերի աշխատակարգերը,

ե) իրականացնում է սույն կանոնադրությունից բխող այլ գործառույթներ:

3.11. ***Ակումբի նախագահը.***

ա) համակարգում է Ակումբի ընթացիկ գործունեությունը և աշխատանքների կազմակերպումը,

բ) հրավիրում և վարում է Ակումբի նիստերը, ապահովում վերջինիս բնականոն աշխատանքը,

գ) Ակումբի անունից կնքում է համագործակցության հուշագրեր և պայմանագրեր,

դ) Ակումբի խորհրդի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում Ակումբի

3.8 A session of the Club Council is authorized if more than half of the members of the Club Council participate in it.

3.9 Decisions of the Council are adopted by a simple majority of the votes of the members present at the session.

3.10 ***The Club Council:***

a) determines the main directions of the Club's development, compiles and presents the agendas arising from them,

b) prepares the annual report of the Club's activity and the semestrial or annual project (timetable) of the organization of events, discusses proposals for the development and modernization of the Club,

c) creates and reorganizes intra-organizational committees and structural units aimed at serving these agendas,

d) develops and adopts the working procedures of the internal structural units and committees of the club,

e) performs other functions arising from this charter.

3.11 ***The President of the Club.***

a) coordinates the current activities of the Club and organization of work,

b) convenes and conducts the sessions of the Club, ensures its normal operation,

c) signs cooperation memoranda and contracts on behalf of the Club,

d) submits the candidates for the Vice President of the Club and the Secretary of the Club to the discussion and approval of the Club Council,

փոխնախագահի և Ակումբի քարտուղարի թեկնածուներին,

ե) Համալսարանի գիտական խորհրդի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում Ակումբի գործունեության տարեկան հաշվետվությունը և միջոցառում-ների կազմակերպման կիսամյակային կամ տարեկան նախագիծը (ժամանակացույց), ներկայացնում Ակումբի զարգացման և արդիականացման վերաբերյալ առաջարկներ:

զ) իրականցնում է Ակումբի նպատակներից և գործունեության ուղղություններից բխող այլ գործառույթներ:

3.12. Ակումբի նախագահը նշանակվում է Համալսարանի ռեկտորի կողմից՝ մեկ տարի ժամկետով:

3.13. Ակումբի նախագահը ի պաշտոնե հանդիսանում է Համալսարանի գիտական խորհրդի անդամ:

3.14 ***Ակումբի փոխնախագահը.***

ա) Ակումբի նախագահի ներկայացմամբ հաստատվում է Ակումբի խորհրդի կողմից մեկ տարի ժամկետով,

բ) Ակումբի նախագահի բացակայությամբ կատարում է նրա գործառույթները և զեկուցում Ակումբի նախագահին,

գ) օժանդակում է Ակումբի նախագահին իր իրավասությունների իրականացման գործում, կատարում նրա հանձնարարականները:

*3.15* ***Ակումբի քարտուղարը.***

ա) Ակումբի նախագահի ներկայացմամբ հաստատվում է Ակումբի խորհրդի կողմից,

բ) ապահովում է Ակումբի խորհրդի նիստի կայացման տեխնիկական ընթացքը, կազմում նիստի օրակարգը, ծանուցում անդամներին նիստի կայացված տեղի և ժամի մասին,

e) submits the annual report of the Club's activity and the semestrial or annual project (timetable) of the organization of events to the Scientific Council of the University for consideration and approval, presents proposals for the development and modernization of the Club,

f) performs other functions arising from the Club's goals and activity directions,

3.12 The president of the club is appointed by the Rector of the University for a period of one year.

3.13 The president of the Club is an ex-officio member of the Scientific Council of the University.

3.14 ***The Vice-president of the club:***

a) is approved by the Club Council for a period of one year upon the presentation of the Club President,

b) in the absence of the President of the Club, performs his/her functions and reports to the President of the Club,

c) assists the President of the Club in the exercise of his/her powers, fulfills his/her instructions.

3.15 ***The Secretary of the club.***

a) is approved by the Club Council upon the presentation of the Club President,

b) ensures the technical process of the meeting of the Council of the Club, prepares the agenda of the meeting, notifies the members about the place and time of the

արձանագրում նիստերը,

գ) օժանդակում է Ակումբի նախագահին իր իրավասությունների իրականացման գործում, կատարում նրա հանձնարարականները:

meeting, records the meetings,

c) assists the President of the Club in the exercise of his/her powers, fulfills his instructions.

## 4. ԱԿՈՒՄԲԻ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Ակումբի անդամակցությունը բաց է Համալսարանի սովորողների համար:

4.2 Ակումբի անդամ կարող են դառնալ սպորտային և մարզամշակութային ակտիվություն և նախաձեռնություն դրսևորող սովորողները, անկախ ուսման առաջադիմությունից:

4.3 Ակումբի անդամության հաստատման և դադարեցման հարցը քննարկվում և որոշվում է Ակումբի խորհրդում:

4.4 Ակումբի անդամները օգտվում են Համալսարանի սովորողներին վերապահված բոլոր իրավունքներից և արտոնություններից:

## 4. CLUB MEMBERSHIP

4.1. Club membership is open to University students.

4.2. Students who demonstrate sports and sports-cultural activity and initiative can become members of the club, regardless of academic progress.

4.3. The issue of confirmation and termination of Club membership is discussed and decided by the Club Council.

4.4. Club members have all the rights and privileges reserved for students of the University.